ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ - Ա

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՎՆԱՍՎԱԾ
ԵՂԵՎՆԻՆԵՐԸ ՀԵՌԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքային զբոսայգում գտնվող 5 արծաթափայլ եղևնիները վտանգ են ներկայացնում զբոսայգու այցելուների համար, եղևնիներն ունեն բավականին լայն տարածվող արմատներ, որոնք ճնշում են գործադրում ասֆալտբետոնե ծածկույթին և եզրաքարերին՝ բարձրացնելով և ճեղքելով դրանք, այդ ծառերը թեքված են, վնասել են զբոսայգու ճեմուղիներն ու հարակից տարածքը, դրանք ցանկացած պահի կարող են ընկնել և վնասներ պատճառել, դրանց ընկնելու հետևանքով կարող են վնասվել նաև մարդիկ, ինչպես նաև այն հանգամանքը, որ 2025թ. մեկնարկել է «Սպիտակ բնակավայրի քաղաքային զբոսայգու վերանորոգում» սուբվենցիոն ծրագրի երկրորդ փուլը, և նախագծով նախատեսված շինարարական աշխատանքներն իրականացնելու համար այդ թեքված եղևնիները և դրանց հարակից դեֆորմացված ասֆալտե ծածկույթը (ճեմուղիներ) լուրջ խնդիրներ են առաջացնում ըստ նախագծի աշխատանքներն իրականացնելու համար՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Համաձայնություն տալ Սպիտակի քաղաքային զբոսայգու վնասված եղևնիները հեռացնելուն: